

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

13 Մայիս 1965, Հիմզարբի օր, Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանին ներս լինելու գտած դպրոցական 1964-1965 տարեշրջանի դաստանդալները: 15 եւ 16 Մայիսի օրերը եւ կիրակի օրերուն ալ Վարժարանը ունեցաւ իր Տարեկան Պաշարը, իսկ 19-20 Մայիս՝ ամսվերջի ֆմալքիները, որոնց յայտրդեցին դպրոցական տարեկանի համագումարները: Մտորն ամոնց հակիրճ ճկարագրականը:

Ս. ՏԱՐԵԿԱՆ ԴԱՏԱՀԱՆԳՈՒՄ

Գ. ԱՄՎԵՐՔԻ ՀԱՆԳԻՍ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Տեղի ունեցաւ Կիրակի, 30 Մայիսի կէսօրէ ետք ժամը 4-ին, Ժառանգաւորաց Վարժարանի մարզադաշտին վրայ, ի ներկայութեան միտքան հայրերու եւ առուարարութիւն տղաժողովուրդի:

Մարզիկներու տողանցքին եւ արքայական քայլերգին վերջ, շուրջ երկու ժամը հանդիսականները վայելչեցին դպրոցին ներս տարուած Ֆիզիքական լուրջ դաստիարակութեան տարուան մը ճիշդին տրդիւնքը: Տղոց նոր մարզիչ՝ Պրն. Արմենակ Պատմահան եւ աղկանց մարզիչ Օրդ. Շուշան Յովսէփեան ըրած էին իրենց կարելիք՝ մարմնամարզի միջոցաւ մեր նոր սերունդը կայտառ ու տողը պահելու համար: Այս տարի, ընդհանուր խաղցանակին վրայ աւելցած էին զուրգոյնքաւ աշխատանքներ: Աշակերտութիւնը՝ ամառը թէ աղիկը՝ բաժնուած էր երկուական խումբերու, նախընթաց տարիներու նման: Վաղի, ոտուի, գոլորտային, պարանոցային եւ ալ խաղերու ընթացքին վարժարանի աշակերտները ցուցաբերեցին մարզական լաւ ոգի եւ աւարացան լուսադրոյն արդիւնքներու:

Դատահանդէս աւարտին, Հոգի. Տեսուչ Ս. Կիրակի Վրդ. Գարիկեան տարանկներով պարգևատրեց յաջող մարզիկները, ինչպէս նաեւ տարւոյն ընթացքին կատարուած մարզական զանազան խաղերու մէջ առաջնութիւն չհանդերձեալ եւ խմբակայինները:

Բ. ԱՄՎԵՐՔԻ ՀԱՆԳԻՍ

ՄԱՆԿԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻՆ

6 Յունիս 1965, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4-ին, Ժառանգաւորաց Վարժարանի շէնքարանքին մէջ կատարուեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի Ամսվերջի Հանդէսը, ի ներկայութեան Հոգեւոր Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու:

Մանկական արտասանութիւններով, երգերով ու հանելիկ պարերով Մանկապարտեզի փոքրիկները մօտ երկու տարեկան ներկայութեան խնայելու եւ հրճուողին ծափեր: Ստացուած արդիւնքը, ինչպէս Հոգեւոր Տեսուչ ընտանիքի փակման խօսքին մէջ, լուսադրոյն ապացոյցն էր բազմամայն Մանկապարտեզային ունեւոր Օրդ. Տիգրանուհի Նալպանտեանի եւ իր օգնական երկու ուսուցչուհիներուն տարուան մը հոգեւոր եւ սրտեանքն աշխատանքին:

23 Երկուսի փոքրիկներն իրենց վկայականները ըստացան Տեսուչ Հօր ձեռքէն, յառաջիկայ տարեշրջանին անցնելու համար Նախակրթարանի բաժնի:

Հանդէսը փակուեցաւ Տէրութեան աղօթքի երգեցողութեամբ եւ Տեսչին զգուշանելով:

20 Յունիսի երեկոյան ժամը 7-ին տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի Երկրորդական Բաժնի Ամսվերջի Հանդէսը, դարձեալ Ժառանգաւորաց Վարժարանի շէնքարանքին մէջ: Հանդէսին կը նախագահէր Լուսաբարապետ Գրդ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Աւանեսեան:

Նախաւորով որ այս տարի յիշատակէն է Հայկական Մեծ Եղեռնին, Տեսութիւնը գովելի դադափար: Ունեցած էր հանդէսին առաջին մասը յառկացնելու այդ նպատակին, մեր նահատակներու ոգեկոչումը ընող առնախօսութիւններով, մենեքեքներով եւ ուղեւորներով, ինչպէս նաեւ հանգստեան շարականներին երգեցողութեամբ: Աւարտական դաստիարակի զբիթ բոլոր աշակերտները մաս ունէին յայտագրին մէջ:

Հանդէսի երկրորդ բաժինը նուիրուած էր վերածաղկած ներկայ Հայաստանին: Դարձեալ ընթացաւ կարծաւակներու կողմէ տրուեցաւ Հայաստանի անկախութեան պատմական, ինչպէս նաեւ ամփոփ պատկեր մը՝ ներկայ Հայրենիքի սահմաններէն ներս դիտական, զեղարուեստական, մշակութային, ճարտարաբանական եւ ալ մարզերու մէջ իրադրուած նորահասակներուն՝ Թիւրքիոյ եւ փաստացի տուականներով: Նշան խմբերգներ՝ նուիրուած վերածաղկած Հայրենիքին: Երկու մասերուն ալ խմբերգները ձեռնառարեցին կը զեկավարէր Վարժարանի երաժշտութեան ուսուցչի Հոգի. Տ. Արշակ Արք. Ոստաութեան:

Հանդէսի երրորդ բաժնին սկիզբը, Տեսուչ Տ. Կիրակի Վրդ. Գարիկեան կարգաց Վարժարանի միամեկ գործունէութեան մանրանքն տեղեկագրէր, զոր կը հրատարակէր «Միտք» այս թիւով: Հրաժեշտի յուշիկ երգէն եւ լրջանաւարտուհի օրերիդ մը արտասանած խնամուած ուղեւորէն հաջ, կատարուեցաւ վկայականներու եւ քցանակներու բաշխումը, ձեռամբ Լուսաբարապետ Գրդ. Հօր: Ընթացաւարաններուն թիւն էր 14, 5 մանչ եւ 9 աղջիկ: Մրցանակներ ստացան զանազան ճիւղերու մէջ դուրս աշխատանք ցուցաբերած աշակերտներ՝ Երկրորդական Բաժնի եւ Նախակրթարանի բոլոր դասարաններէն:

Լուսաբարապետ Արքեպիսկոպոս յորդորական փակման խօսքով ու օրհնութեամբ ու զգեւորեցին վերջու տպագրութիւն այս հանդիսութեանը: